

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ԹԻԻ 10

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1897

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՈՒԹԵԱՆ

Պաշխարհացի հասարակ	սարեկան	10	ֆր.
« « « « «	վեցարևական	5	«
Օսար երկիրներու հասարակ	սարեկան	12	«
« « « « «	վեցարևական	6	«

Գլուխիւնները եւ չեն դարձուիր

վարչութիւն «խուզակի» Բուսնոյ
Administration du «Khousag» Rousthouk

ԽՈՒՋԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՅԱՆՁՆ ԿԱՌՆԷ ՏՊԱԳՐԵԼ

Հայերեն Պոլիարերեն եւ Ֆրանսերեն լեզուներով

ԱՅՅԵՏՈՄՍ, ՀՐԱՒԻՐԱՏՈՄՍ, ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ, ԵՒ ԱՅԼՆ

ԿԸ ՏՊԱԳՐԷ ՆԱԵՒ ԶԱՓԱԻՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳՐԲԵՐ ՈՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ

ՀԱՅԵՐԷՆ ԱՆՋՈՒԱՒ

Ա.ԶԴ

Առեւտրական գործերու հմուտ ու աշխատասէր մէկը
պատրաստէ չափաւոր վարձքով ծառայելու

Պէտք զգացողները պէտք է դիմեն վարչութեանս:

Քաղաքիս մէջ պատահած ահեղի տրկած մը* որ բաւական դժադգութիւններու պատճառ դառցած էր՝ առիթ եղաւ կարգ մը հրապարակագիրներու, երեմիական ողբերով սիւնակներ լեցնելու։ Մենք, հետեւեցանք իր ժամանակին այդ գրութեանը, յուսալով որ, հոն պիտի գտնէինք այս աղետին իրական բացատրութիւնը, և այն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլար մարդկութեան աղատիլ՝ այս ու այս օրինակ անտեղի, լազմադան ու յարաճուն աղետներէ։ Շատ իրաւունք կար յուսալու որ, վերջապէս անոնց մէջ բա՛ն մը պիտի գտնուէր. բայց կատարելապէս յուսախաբ եղանք՝ տեսնալով որ, այդ աղետարշ նկարագրութիւններուն տակը՝ նոր, հրահանգիչ բան մը չկար. ոմանք կը պարունակէին զուտ կանացի լաց մը, որոնցմով գրողները ցոյց կուտային իրենց սրտերուն ըզզայնութեան չափը. առոնք լալկաններու դասին կը վերաբերէին. լայց ասոնցմէ աւելի խեղճերն ալ գտնուեցան։ Նամակի մը մէջ այս տրկածին նկարագրութեան հետ կը կարդանք. «..... Իութացերէին արկածին վայրը և կեանքերնին վտանգի գնելով....»

* Հրացանի հին փամփուշտներու հրանիւթերը շահագործելու համար անհատի մը կողմէ հիմնուած գործարանը բռնկելով 200 հոգի այրեցան։ Պատճառը ուրիշ բան չէր բայց եթէ այն ազահութիւնը, որուն համեմատ գործարանատէրը կը բանեցնէր, աժան վարձքով՝ վառօթին բնութենէն տեղեկութիւն չստանալով՝ տղաք ու կիներ, և չէր ձեռք առած այն կանխազգուշութիւնները, որ ասանկ գործի մը համար անհրաժեշտ է

Անկասկած է որ, այսպիսի արկածներ առիթ կ'ըլլան շատ մը պաշտօնեաներու ուստ ու լիւստ աշխուժութիւն մը, և կամ կեղծ անձնութիւն մը ցոյց տալով ժողովրդականութիւն չափելու, ու այսպէս մոռցնել տալու բարոյական այն ճշմարիտ պատասխանատուութիւնները, որոնցմէ անոնք երբէք չեն կրնար ինքրդինքնին ազատ նկատել, բայց չենք հաւատար որ բարութեան սիրուն համար ինքրդինքնին վտանգելու չափ առաջ երթան. զի, եթէ իրօք, եթէ անկեղծօրէն այդպէս ըլլար՝ զայն պէտք էին ցոյց տալ աւելի այն պարագաներուն մէջ, որ լռիկ քննիկ միշտ կը ներկայանայ իրենց:

Անոնք, այժմ լիութացած էին արկածին վայրը ԿԱՌՔԵՐՈՎ, բայց այդ այնպիսիներու համար աւելի ժամանց մը, սովորական կեանքի հաճելի փոփոխութիւն մը և հանդիսաւոր օգտօրիտութիւն մ'է, քան ուրիշ որ ևիցէ մի բան, նման վեհապետներու իւր թէ «մեծ» մեծ» ազգային շահեր պաշտպանելու նպատակաւ բրած խիստ տաժանելի ու յոգնեցուցիչ ճամբարգութիւններուն:

Փալով արկածին պատճառած ապէսներուն աստիճանին՝ մենք, անոնց՝ որ Րուսչուքի արկածին նման արկածներու ժամանակ միայն կուլան, կը լորբօքին դո՛հ եղող աղքատ ժողովրդին համար, որպէս թէ միայն ատանկ ձայն ու բոմբիւն հանող արկածներու ժամանակ է որ ժողովուրդները այսօրինակ դժբաղդութիւններ կը կրեն, կ'ըսենք. լալու կամ պռալու համար մի բնտուէք ատանկ առիթներ. աչքերնիդ լաւ բացէք որպէսզի կարող ըլլաք տեսնելու ամէն վայրկեան գոյութիւն ունեցող այն անհուն բեղհանուր թշուառութիւնը, որուն տակաւին մէկ փոքր մասը չը կազմեր Րուսչուքի արկածին պատճառած աղէտը. և ատոնք են անօթութիւնը, տաժանակիր ու գրաւ տային աշխատութեւնները և վերջապէս բարոյական ու ֆիզիքական պէտ պէտ մաշեցուցիչ ցաւերը, դորս կը կրեն ԱՆԺԱՌԱՆԳՆԵՐԸ ամէն օր՝ ընկերային ու քաղաքական հրէշային օրէնքներու երեսէն, որուն գոյութիւնը կամ

տակաւին տիրապետութիւնը կը բացատրուի միայն այն խորունկ տգիտութեամբ ու ծանր նախապաշարումներով որուն մէջ դեռ կը գտնուի այս օրուան ապրող սերունդը հակառակ այս դարուն պարծենքին

Իւվանօֆին համար պոռպոյն թէ, իր շահախնդրութեանը զոհ տուաւ 200 խեղճեր, և նոյնչափ ընտանիքներու սիրաւ արիւնեց կամ նեցուկէ զրկեց զանոնք, բայց ան բնաւ անհատ մը չէ, այլ կը ներկայացնէ դասակարգ մը, որուն միայն մէկ անդամն է Իւվանօֆ, դասակարգ, որ սաւաթիկ բուսիկ՝ ամէն օր կը կրծէ մարդկութեան ամենալաւաշոյն և ամէնամեծ մասին, այսինքն արտագրողներուն, հոգին ու մարմինը՝ այն ոյժերով, որ մեր տգիտութիւնը անոնց ձեռքը տուած է

Պէտք չէ սակայն գատապարտել ոչ Իւվանօֆը, որնոր օրէնքին տրամադրած նիւթական երաշխաւորութիւնը տալէ վերջ՝ այսօր անխռով իր գործը կը շարունակէ, բայց այս անգամ կանուխէն մոռցուած զգուշութիւնները ձեռք առնելով, և ոչ ուրիշները՝ որոնք կրնան Քա մառքաթիպայի անփնաս մարդուն պէս հանդարտ խղճով երգել «հետեւելով միշտ աշխարհի օրինաց եւ կեանքումս մարդու փնաս չի արի»։ Պէտք չէ գատապարտել ըսինք, վասնզի, գիտութիւնը և փորձը մեզ կը սորուեցնէ թէ, ընկերային ու քաղաքական արդի կարգերուն ու պայմաններուն տակ ապրող ժողովուրդէն առաջ կրնան գալ միմիայն ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ և կամ մարդկային ամէն ազնիւ կարողութիւններէ ու արժանապատութենէ բոլորովին մեր կացած ՍՏՐՈՒԿՆԵՐ։

Դարերու երկար փորձառութիւնները ունենալէ, և գիտութեան ձեռք բերած անհերքելի ապացոյցները տեսնելէ վերջ, յիմարութիւն պիտի ըլլայ տակաւին կարծելը թէ, կրօնքի պատուիրաններով և կամ բարոյական ուղիղ սկզբունքներու տարածոնմովը կարելի պիտի ըլլայ մարդկութիւնը հասցնել այնպիսի քաղաքաքակրութեան մը, որուն մէջ ամէն մարդ մէկ մէկ հրեշտակ-

ներ դառցած՝ ալ պիտի դադրին իրենց գոյութիւնը ու զիրքը ապահովելու համար զիրար յօշոտելէ, իրարու կեանքն ու երջանկութիւնը քանդելէ:

Չարիք մը վերցնելու, կամ հիւանդութիւն մը դարմանելու համար, պէտք է չնչել անոր արտադրող պատճառը: Արդ, քանի որ այսօր, ալ բացարձակ ճշմարտութիւն մ'է, որ ցարդ գոյութիւն ունեցող և օր աւուր հսկայաքայլ յառաջացող մարդկային ամէն տառապանքներն ու դժբաղդութիւններն աբդիւնք են տնտեսական ներկայ հրէշային դրութեան, ընկերային ու քաղաքական յոռի կազմակերպութեան, ուրեմն իր դարմանն է խորտակել այդ ամէնը և տալ անոնց կազմակերպւթիւն մը համեմատ գիտական, ճշմարտութիւններուն, և արդիւնաբերական արդի եղանակին: Ասոր հասնելու համար կամ ասոնք կարենալ գործադրելու համար՝ պէտքէ ծաւալել այս կարգերուն զս ու անոնց տակ ճնշուած ժողովուրդներուն մէջ՝ ամէնէն աւելի այն գիտութիւնները, որոնք կը վերաբերին ընկերութեան այս ցաւերուն:

ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակ մէջ բերած են Նաբոլէոն Ա. ը 'ի մասնաւորի, իբրեւ օրինակ մը անհատական կամքի զօրութեան: Լաւ ըրած կըլլային սակայն եթէ զայն առնէին իբրեւ օրինակ ինչ որ զիպ ուածները կրնան ընել մարդու մը ճակատագիրին համար եւ եթէ զայն առնէին իբրեւ օրինակ այն ազդեցութեան զոր այսպիսի ճակատագիր մը կրնայ ունենալ ժողովուրդի մը այսինքն միլիոնաւոր ծնած կամ ծնելիք ուրիշ էակներու ճակատագիրներուն վրայ: Նաբոլէոն ո՛չ նախատեսած եւ ո՛չ ալ ուզած էր Յեղափոխութիւնը, առանց որուն մնացած պիտի ըլլար ո եւ է պաշտօնակալ մը: Երբ մինչեւ անգամ այն (յեղափոխութիւնը) տեղի ու նեցաւ, քան մը չը հասկցաւ անկէ եւ կատարեց իր զինուորականի արուեստը այն պետերուն հետ զորս իշխանութեան կը կանչէր, ինչպէս ըրած պիտի ըլլար միապետութեան ատեն: Գրեթէ իր միակ մտադրադումն է պաշտօնի դնել իր եղ-

բայրները եւ ամուսնացնել իր քոյրերը, ինչ որ շինական ազնուա-
կանի կամ քորսիքացի պզտիկ կալուածատէրի մը զաւակին
գործն է: Յառաջացում ձեռք ձգելու համար կ'ամուսնանանայ
Ժողէֆինի հետ, իրմէ աւելի տարիքոտ այրի մը, արդէն մայր,
ինչ որ՝ կայսերական տիքատորութեան հետամուտ մարդու մը
գործը չէ: Այնքան քիչ հաւատք ունի իր ապագային վրայ որ
սուլթանէն կը խնդրէ թրքական զօրքերուն կրթիչ ըլլալու,
ապահովելու համար իր գոյութիւնը: Առանց իր Լիւսիէն եղբօր
տուած չը պիտի ըլլար Պրիմէրի պետական հարուածը: Երբ
կայսր, կը խորհի միայն իր ընտանիքը տեղաւորելու, ինչպէս որ
կ'ընէր հրետաձիգներու տեղակալ եղած ասին: Ճակատամարտնե-
րուն մէջ ցոյց կուտայ մեծ հրամանատարի մը, վճռականօրէն
մասնագէտի մը հանճարը. բայց խաղաղութեան իր բոլոր գաշնա-
գիրները արատուած են գրեթէ թանձր անհեռատեսութեամբ մը,
այնպէս որ անոնց գործադրութիւնը նորէ պատերազմ կը յարու-
ցանէ, երբ նոյն իսկ յոգնած է պատերազմելու եւ իրեն կը
պակսին մարդ եւ դրամ: Քաղաքական խնդիրին մէջ, մի եւ նոյն
անհեռատեսութիւնը: Կ'ընդունի հոռիմէական օրէնքով միաբան-
ուած յեղափոխական ժողովներու ժողովեան եւ պուրժուական
հիմնական օրէնքները, առանց ինքնիրեն հարցնելու թէ ի՞նչ պի-
տի արտադրեն, եւ վերջապէս տասնութ տարի պատերազմելէ,
Եւրոպան տակնուվրայելէ, հարիւր հազարաւոր անձեր սպաննելէ,
միլիոններ չռայլելէ, կեանքին մեծ մասը ձիու վրայ ճամբանե-
րը եւ բանակներուն մէջ անցնելէ եւ արձակելէ վերջ կին մը
որ գոնէ զինք կը սիրէր, ամուսնանալու համար աւստրիացի իշ-
խանուհին հետ որ զինք կ'ատէր եւ կը խաբէր, բռնել կուտայ
զինք եւ կ'երթայ բանտարկեալ մեռնելու Սուրբ Հեղինէի ժայռին
վրայ, թողով Պրանսան արշաւուած, կործանուած, նուազ մեծ
քան ինչ որ չէր իր գահակալութեան ատեն: Ճշմարիտ, իբրեւ
ճակատագրի ծրագիր, կրնար մին լաւադո՛յնը երեւակայել:

Պէտք է ճիշդ ըսել որ եթէ Նաբոլէոն նուազ խաղալիկ եղած
ըլլար, դիպուածին, պարապաներուն՝ եւ իր բուն անհեռատեսու-
թեան, եթէ եղած ըլլար մեծ քաղաքագէտ մը ինչպէս Հենրիկոս
Դ., Ռիչլիէօ կամ Գլըյմուէլ, նուազ չլացուցած պիտի ըլլար
պատմութիւնը, Կայսր եղած չպիտի ըլլար. նուազ տակնուվրայ
ըրած պիտի ըլլար Եւրոպան, նուազ պատերազմ եւ հետեւաբար
չառ քիչ ճակատամարտ չահած: Իր եղբայրները թաղաւոր ըրած
չպիտի ըլլար: Կազմած պիտի ըլլար զօրաւոր կերպով միացած
երեք Պետութիւններ-Պրանսան, Գերմանիան եւ Իտալիան, որոնք
կազմած պիտի ըլլային եւրոպական ամենահզօր գաշնաւորութիւն

(fédération) մը. չպիտի պէտք ունեցած ըլլար ստեղծելու, ղինու-
րական հարկաւորութիւններուն համար, ճարտարականութիւնը
(industrialisme) որ զարցած է մեր տնտեսական անբուժելի վէրքը
եւ առժամայէս պահելով մէկ տեղ յեղափոխական օրէնքները,
գէթ թոյլ տուած պիտի ըլլար Ֆրանսայի պատրաստելու իր
աւանդութիւններուն եւ պէտքերուն համաձայն նոր օրէնք մը:
Զպիտի եղած ըլլար մեծ հրոմանա աար մը. պիտի եղած ըլլար
միտյն մեծ քաղաքացի մը:

Պարոն Ֆելիքս Ֆօրի պարադային առիթով է որ յայտնուե-
ցաւ անհատական պատասխանատուութեան վարդապետութիւնը:
Արդ, կարելի է, եթէ ոչ նախատեսել, գոնէ ենթադրել առանց ո'րեւէ
չափադանցութեան որ հակառակ նախապաշարումը դաւանող վե-
հապետ մը, ինչպէս Վիլհելմ Բ., որ դատապարտել տուաւ իր
պապուն ուղղուած քննադատութիւնները իբրեւ քրէական յան-
ցանք, փնտռէ կռիւի առիթ, ինչպէս Շնէօպէլէի գործին ատեն:
Իրեն պիտի բաւէր ընել, պալատականներուն կամ դեսպաննե-
րուն առջեւ, նախատական ակնարկութիւն մը Պ. Ֆելիքս Ֆօրի
ազգականութեան վրայ, որ Հանրապետութեան նախագահութեան
թեկնածելու ատեն թերեւս ատոր վրայ չխորհեցաւ բաւական:
Այն ատեն Ֆելիքս Ֆօրը չէ որ պիտի երթար իբրեւ պարզ
քաղաքացի մը հատուցում պահանջելու վեհապետէն ըրած նախա-
տինքին համար եւ փոխանակել իրեն հետ ատորճանակի գնդակ-
ներ կամ թուր թուրի գալ: Հարիւր հազարաւոր մարդիկ են, որ
ղինք հազիւ անոնով ճանչնալով, պիտի երթային, իր նախատին-
քին վրէժը լուծելու համար, զինք ներկայացնել ճակատամարտի
դաշտերուն վրայ, զինք՝ որ շինծու կերպով կը ներկայացնէ
Ֆրանսան: Ինչ պիտի ըլլար այս պատերազմը: Հաւանականա-
բար անգէտ մը գոնէ երկու ազգերուն համար: Բայց, ինչ որ ալ
ըլլայ անոր արդիւնքը, սակայն եւ այնպէս ճշմարիտ է որ երկու
ժողովուրդները պատասխանատու պիտի ըլլային գործի մը հետե-
ւանքներուն, որուն մէջ կը պնդեն թէ չկայ պատասխանատու-
ութիւն, բացի անյայտացած անձին համար, որուն աղջկան հետ
կաշիի դեռատի վաճառական մը ատենօք ամուսնացաւ, առանց
նախատեսելու թէ պիտի ուղէր ըլլալ եւ պիտի ըլլար օր մը
հանրապետութեան նախագահ:

Ինչ որ ալ կարենան ըսել անհատականութեան վարդապե-
տականները, մարդս՝ ուղէ չուղէ, իրականապէս պատասխանատու
է իր երկրին, իր կուսակցութեան, իր նախնիքներուն, իր ընտա-
նիքին, նոյն իսկ որոշեալ չափով մը իր բարեկամներուն, եւ միակ
մաքղը՝ որ կարենայ հրճուիլ թէ ինքն իրեն պատասխանատու է

միայն, ինք առանձին կը կաղմէ իր ճակատագիրը, անիկայ է որ կղզիացած կը մնայ, չունենալով ընտանիք, անջատուած հայրենիքէն, չուզելով բան մը ըլլալ, չըլլալով բան մը եւ հետեւաբար ապրելով հաւասարապէս անծանօթ եւ անօղուտ:
 Լա Ռովիւ Սօսիալիսթ, Թիւ 138

Բիէռ Տընի

ՓԱՆ-ՓԱՊ ՌՈՒՍՕ ԷՄԻՆ

Յիմարութիւն պիտի ըլլար զպրոցին մէջ գեռատի բազմահմուտներ պատրաստել ուզելը, տղաքները գիտական մթերքով բեռնաւորել յաւակնիլը եւ երեւակայելը թէ իրօք պիտի գիտնան, երբոր ձգած ըլլան դասարանը:

Ամէն ինչ պիտի շահուի եթէ հետեւնին տանին անոնք հետաքրքրութեան խթանը եւ զայս գոհացնելու միջոցները: Եւ լաւ նկատողութեան առնելով իրերը, երկրորդական ուսումը՝ մանաւանդ իր առջի տարիներուն մէջ, ասկէ տարբեր փառասիրութիւն մը չկրնար ունենալ բն'աւ:

Ռուսօի՝ ուսուցիչներէն պահանջած յատկութիւնները ճիշդ անոնք են, որոնք պատշաճ են այս գործին: Ռուսօ կուզէ որ ուսուցիչները ըլլան հաստատուն ու արթուն. քիչ հրամաններ տան, քիչ արդիւքներ ազդարարեն, բայց բնա'ւ զանոնք ետ չառնեն: Տղան թշուառ ընելու ապահով միջոցն է զայն ամէն բան ըստանալու սովորեցնել: Տ'ան անոր ամենէն մեծ կարելի ազատութիւնը, ռակայն հոգ տանին տղան պահելու անանցանելի կանոններու մէջ: Զգուշանան պահանջելու անկէ անխորհուրդ խոստումներ, զորս միշտ պատրաստէ ընելու բայց անկարող պահելու:

Եռանդուն եղի՛ք, կ'ըսէ իրենց Ռուսօ, բայց պարզ, խելօք, զգոյշ: Սերտեցէ՛ք ձեր աշակերտները, մ'ի աճապարէք զանոնք դատելու մէջ, անոնց հետ վարուեցէ՛ք իրենց տարիքին համեմատ. մէկ խօսքով, սիրեցէ՛ք տղայութիւնը, նպաստեցէ՛ք անոր խաղերուն, երջանիկ ըրէ՛ք զայն, իր բնական պայմանին մէջ զայն թողելով:

Ռուսօն կ'ընդունի որ դժուարին գործ մ'է այս, թէ ասոր կատարումը ամէն մարդու տրուած չէ: Մարդ մը կազմելու ձեռնարկին մէկը համարձակելէ առաջ, կ'ըսէ հեղինակութեամբ, պէտք է որ նախ ինքը մարդ եղած ըլլայ, պէտք է իր մէջ գտնէ այն օրինակը, զոր առաջարկել կ'ուզէ: Եւ կը պահանջէ որ

ուսուցիչը ըլլայ բարի, վեհանձն, ողորմած, առաքինի, ամէն բանի մէջ տիպար իր աշակերտներուն:

Բնա՛ւ վէպ մը չէ այս: Դործնական իմաստութիւնն է որ դեռ պատշաճ է. տակաւին այսօր այն՝ հիացում եւ խոկում կ'ազդէ բոլոր անոնց, որոնք կը զբաղին դաստիարակութեամբ եւ ուսուցմամբ:

Շնորհիւ այն՝ քան ճիշդ այս տեսութիւններուն, այս բարձր եւ թափանցող բանականութեան՝ գոր կը լուսաւորէ իր գրագէտի հանճարը, գոր կը վառէ հաղորդուող կիրք մը եւ որ կը բացատրուի յափշտակիչ ճարտարախօսութեամբ մը, Էմիլի հեղինակը եղած է բարենորոգիչ մը, դպրոցի պետ մը, որուն աշակերտները անթիւ են եւ որոնց աստիճաններուն մէջ կը հաշուուին արդի դարուն ամէնէն երեւելի մանկավարժները:

Անոր համար՝ որ գիտէ հասկնալ, իրերուն խորը մանել, սննդաւոր ծուծը գտնել, նկատել չափազանցութիւնը, հակափառութիւնները ողջմտութեան լեզուին վերածել, տեւական սկզբունքները անկայուն մանրամասնութիւններէն զատել, Էմիլը ամբողջապէս, Երկրորդ Դիրքը մասնաւորապէս, ուր կը պարզուի այնքան ճարտարօրէն տղայութեան կանոնաւոր ու բնական դարգացումը, պիտի մնայ գլուխ գործոց մը եւ խելացի ուսուցիչները պիտի չզաղրին ամէնէն բեզուս դասերը քաղելէ անկէ:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԵԹՈՏԸ

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ

..... Ինչ որ մեզ կը ժողվէ հոս ամէնա, Տիկիներ եւ Պարոններ, ընկերական խնդիրին մէկ ընդհանուր մտադրազումն է, եւ կը հասկնամ այս սովորական բացատրութիւնը՝ իրեն աւմէնէն լայն իմաստով: Չեմ ըսեր տնտեսական խնդիրը, բանւորական խնդիրը, որովհետեւ այս բառերը կը ցուցնեն արդի մարդկութեան առջեւ դրուած ընդարձակ խնդիրին միայն մէկ մասը, մէկ երեսը: Արդարեւ, խնդիր է գտնել ընկերական կազմակերպութեան այնպիսի եղանակ մ'որ ամէն մարդկային էակ կարենայ զարգանալ կարելի եղածին չափ լիովին եւ ազատօրէն առանց վնասելու եւ նոյն իսկ օգնելով ուրիշին զարգացումին եւ ամբողջ ընկերութեանը:

Ամենախոշոր հարց, լուծելը զժուար, իր բոլոր ընդարձակութեանը մէջ նոյն իսկ ընդգրկելը զժուար: Բանը որոշելն է ան-

հատին եւ ընկերութեան մասը, կամ մարդերու իրերուն հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ, կամ մարդերու՝ մարդերու հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ: Այսպէս հարցը տնտեսական է, քաղաքային, քաղաքական, եւ այլն: Իրեն առարկայ ունի բոլոր այն նիւթերը, որոնք առժամայէս կը կառավարուի մեր զանազան օրինադիրքերէն: Կը շօշափէ ընտանիքը, դաստիարակութիւնը, ինչպէս նաեւ հասարակաց առողջութիւնը: Միայն այդ չէ: Կը տարածուի մինչեւ արուեստին եւ կրօնքին: Ո՛չ թէ պատասխանելու է (խիստ անհուն պետի ըլլար ասիկայ) անթիւ հարցական կէտերուն, որոնք կը դրուին քաղաքակրթութեան սահմաններէն իւրաքանչիւրին մէջ: Օրինակի համար պարտաւոր չէ հետազօտել ինչ որ նկատուած են կամ կրնան նըկատուիլ իրենք իրենց արուեստը, կրօնքը, առողջապահութիւնը: Բայց քաղաքակրթութեան բոլոր սահմանները իրմէն կախում ունին տեսակէտով մը, որ միշտ մի եւ նոյնն է. միշտ եւ ամէնուրեք հարցն է գիտնալ թէ ո՛ր պարագաներուն մէջ եւ ի՞նչ չափով ընկերութեան մէջ ապրող մարդուն գործը՝ չլիտի ըլլայ անհատական կամ հաւաքական: Ընկերական խնդիրը, երբոր մին փորձէ անոր զանազան ձեւերը միութեան բերելու, կը վերածուի դործնապէս անհատին եւ ընկերութեան իրաւունքներուն մի գասալուծութեանը եւ կրկին դասակարգութեանը:

Ի՞նչպէս զայն լուծել: Ա՛յնքան ընդարձակ, ա՛յնքան խառնաման ամբողջութեան մը առջեւ, զարմալի չէ որ լաւագոյն կամ քերը ըլլան տարտամ, չփոթած, անհամաձայն: Ահա ի՞նչու համար ուղեցի ձեզ այսօր խօսիլ անոր վրայ որ ինձ կ'երեւի թէ էական բանն է ամէն կարգի ուսումնասիրութիւններու սկիզբը մեթոտը:

Կան, ինչ որ ալ կարենան ըսել յոռեաեսութեան սակայն եւ այնպէս հնաձեւ առաքեալները, հեղ եւ վեհօրտ հոգիներ որոնք դեռ կը հաւատան մարդկային բարութեան, որոնք յոյս կը դնեն, անհամաձայնութիւնները եւ կռիւնները ջնջելու համար, սէրին եւ ասոր գործած հրաշքներուն վրայ, փոխադարձ համակրութեանը վրայ որ կրնայ մօտեցնել մի եւ նոյն տեսակէն եղող էակներ եւ զանոնք հաշտեցնել եղբայրութեան ջերմաջերմ խանդի մը մէջ: Եւ ստուգիւ ես չեմ որ պիտի ուրանամ զգացումին անհաշուելի կարողութիւնը, գթութեան բարձր արժէքը եւ բեղուն մղումները, ես չեմ որ պիտի պարսաւեմ ով որ մարդերու սիրտին մէջ կը շնչէ համաձայնութեան մէջ խաղաղութեան բաղձանքը եւ իրենց կը յիշեցնէ այն պարզ ու գեղեցիկ խօսքերը ուր թերեւս պարփակուի ապագայ երջանկութեան բոլոր զաղտնիքը. «Սիրեց'էք զիրար»: Դժբաղդութիւնը այն է որ գրեթէ հազար ինը

հարիւր տարիէն ի վեր կը կրկնեն այդ խօսքերը, ինչ որ ենթադրելիութեամբ որ անոնք բաւական յամբօրէն թափանցող զօրութիւն մը ունին: Լաւ գիտեմ նաեւ որ եղբայրութիւն բառը կը տարածուի մեր հասարակաց յիշատակարաններուն պատերուն վրայ: Միայն թէ կը նմանի, աւագ, ազատութիւն բառին որ կը փայլի ճիշդ քովը մինչեւ բանտերուն վրայ: Մեզմէ ո՞վ չգիտեր որ հոգիին խորէն մինչեւ շուրթերուն ծայրը հեռաւորութիւն կայ, կենդանի զգացումէն մինչեւ ասիկայ ներկայացնող ստախօս խորհրդանշանը:

Բայց երբ նոյն իսկ եղբայրական սէրի բոլորքում մը բարձրացնէր մարդիկ իրենց սովորական անձնամոլութենէն վեր, ինչպէս ասիկայ տեսնուեցաւ մեր պատմութեան քանի մը եռանդագին օրերուն մէջ. երբ նոյն իսկ ուրիշները երջանիկ տեսնուլու անորոշ կամէութիւնները փոխուէին կորովի կամքերու, հաստատ փոխանակելու սրտագին համաձայնութիւն մը հակառակորդ շահերու կռիւին, կը հակարձակիմ ըսել որ ասիկայ չպիտի բաւէր գեռ:

Մարդս յաճախ չարիք կ'ընէ ուզելով եւ կարծելով բարիք ընել: Հաւատաքննիչներուն անողորմ աստուածասիրութիւնը կ'այրէր հերետիկոսներուն մարմինը, անոնց հոգին փրկելու պատրուակով: Անխորհուրդ ողորմութիւնը կ'անարգէ, կը նուատացնէ, ծուլութեան մէջ կ'ընկղմէ զանոնք զորս սիրիկել կ'ուզէ: Լաւագոյն զիտաւորութիւնները՝ լուսաւորուելու պէտք ունին, եթէ ոչ ամուլ կամ վտանգաւոր կը դառնան: Այո՛, անտարակոյս, գարով՝ ամէն ապրողին ու տառապողին վրայ, արգահատանք՝ տկարներուն ու հարստահարեալներուն համար, մարդասիրութիւն վերջապէս, ահա գործունէութեան վեհ եւ պատուական զրդողներ: Անոնք՝ ընկերական յառաջդիմութեան համար աջակց են ինչ որ է չոգին նաւերու թացքին համար—չարժիչ զօրութիւնը. վարիչ զօրութիւնը չեն անոնք: Կրնան շարժումի մէջ դնել գէպի լաւագոյնը ձգտող ջանքը. անբաւական են զայն ուղղելու: Մի արհամարհէք երբեք զանոք, բայց բնա՛ւ մի վստահիք անոնց ընդհատ ու անխորհուրդ ուժգնութեանը: Բարեկաւելու համար այնքան կնճռոտ մի գրութիւն որքան է ընկերութիւնը, զգացում մը չկրնար առանց գիտութեան աջակցութեան ըլլալ:

Գիտութեան անունը տուի, Պարոններ: Զպիտի կորսնցնեմ ոչ իմ ժամանակս եւ ոչ ալ ձերը զայն ջատագովելու համար: Եթէ կ'ըսեն թէ գիտութիւնը պէտք ունի պաշտպանեւելու մանաւանդ իրմէն զարհուրողներուն յարձակումներուն դէմ, տեղը չէ, կարծեմ, Դպրոցի մը մէջ որ կ'ուզէ Ընկերաբանութեան ազատ Ֆա-

կուլթայ մ'ըլլալ, Գոլէթի մը մէջ՝ որուն գոյութեան պատճառն է նա: Ինձ աւելորդ կը թուի հաստատել հոս Պարոն տը լա Բալիսի արժանի այս ճշմարտութիւնը թէ խնդիր մը լաւ լուծելու համար պէտք է սկսիլ լաւ ուսումնասիրել զայն: Լաւագոյն կը սեպեմ բացատրել ձեզ թէ ո՛րն է, ինձ նայելով, այն զիտական մեթոտը որ կը յարմարի ընկերական հարցին ուսումնասիրութեան:

Կրնայի, թերեւս պարտէի, ձեր հետաքրքրութիւնը աւելի լաւ գրգռելու համար, ձեզ սպասցնել իմ եզրակացութիւններու, մինչեւ այս բանախօսութեան վերջը: Բայց ես կը զոհեմ վարանքի մէջ ձեզ պահելու հաճոյքը՝ որոշ եւ հետեւելու կողմէ գիւրին գաղափարներ ձեզ բերելու բաղձանքին: Ուրեմն ձեզ պիտի ըսեմ իսկոյն որ աշխատութեան ծրագիրը՝ որ հարկ կը դառնայ մեզ գրադեցնող նիւթին ուշագիր ամէն միտքի, ինձ կը թուի թէ կը բազկանայ երեք հաւասարապէս կարեւոր մասերէ.

1. Ուսումնասիրել արդի եւ անցեալ ընկերութիւնը, մարդը ինչպէս որ է կամ եղած է:

2. Ուսումնասիրել ինչ որ կրնան եւ պարտին ըլլալ ազագայ մարդը եւ ընկերութիւնը:

3. Ուսումնասիրել ճախարհները եւ միջոցները որոնք կրնան առաջնորդել եղածէն ըլլալիքին:

Ուրիշ բաներով, մեթոտը պէտք է ըլլայ նախ իրապաշտկալե յետոյ իճեապաշտկալե, խառն վերջապէս, եւ այսպէս քարոզ մ'է սա երեք կէտերով, քարոզ մը՝ բանաձեւին համեմատ, թէ եւ շատ աշխարհական, զոր պիտի ընդլայնեմ ձեր տոջեւ:

Ա.

Իրականին, կային եւ եղածին, գիտութիւնն է անշուշտ նախնական հիմը զոր պէտք է ընել այնքան ընդարձակ, այնքան հաստատուն որքան կարելի է: Յարգա՛նք եւ պատիւ ուրեմն աշխատողներու զանազին, որոնք այս անհուն դաշտը մշակելու ետեւէ կ'իյնան կատաղօրէն: անոնց բանակը կը բաժնուի, սանկ ըսելով, երկու գունդերու: Ոմանք կը ջանան պարզելու ազգերու կեանքը կազմող բնութեայթներու քառոր: Կը կարգաւորեն, կը պարզեն, կը թափանցեն զայն լուսագիծ անցքերով: Զայն կ'ընծայեն աւելի պայծառ եւ աւելի գիւրիմաց: Պատմաբաններ, վիճակագիրներ, տնտեսաբաններ, եւ այլն, ամէնը ամրացած զանազն սահմաններու մէջ, ամէնը գործածելով առանձին կերպեր, ո՛չ միայն կը բարդեն իրողութիւնները, կը բազմացնեն վերլուծումները, այլ մասնաւոր իրողութիւններու կոյտէն կ'անջատեն ընդ-

հանուր ճշմարտութիւններ, կը փորձեն հիւսել անոնց մէջ տեղ պատճառներով եւ արդիւնքներով սեղմ թեզան մը, կուրուագծեն արդէն մասնական համադրութիւններ: Անոնց երեսէն է որ մենք կարծօրէն կը տիրանանք անհետացած դարերու փորձառութեան, կը գտնենք կամ կը գուշակենք մէկ քանիները այն օրէնքներէն որոնք կը վարեն ընկերութիւններու բնաշրջումը: —Միւսները այս ատեն, բնախօսներ եւ հոգեբաններ, կ'ուսումնասիրեն մարդը, իր ընդունակութիւնները, իր ձգտումները, այն հարկաւորութիւնները որոնց ենթակայ է. կը հետազօտեն իր գգացողութեան գաղտնիքները, իր խմացականութեան սահմանները. կը քակեն իր կամքի անիւները. կարճ խօսելով կը կեդրոնացնեն իրենց խուզարկութիւնները անհատին ֆիզիոլոգիական եւ մտաւորական կազմութեանը վրայ:

Երկուքն ալ — մի մոռնաք ատիկայ — կը կատարեն այսպիսի օգտակար, կարեւոր եւ անհրաժեշտ գործ մը, քանի որ, սահմանով (definition), ընկերական տարրին եւ անհատական տարրին միաւորութիւնը նոյն իսկ հիմն է ընկերական խնդիրին: Երկուքն ալ կը ժողովեն նիւթեր, կը ստանան արդիւնքներ որոնցմէ կը կազմուի քիչ քիչ դրական ընկերաբանութիւնը: Անգամ մ'ալ, պատի՛ւ այս երկու կարգ խուզակներուն, (chercheur), որոնք հորիզոնին չորս ծայրերէն կը հաւաքեն ծանօթութիւնները անհրաժեշտ անոր որ կ'ուզէ հասկնալ, նախատեսել եւ ուղղել ընկերութիւններու ընթացքը:

Հա՛րկ է մանրամասնել այն ծառայութիւնները զորս կը մատուցանեն անոնց միտքին, զորս կը տանջէ ապագային հոգը: Յուցնելով որ այսպիսի ծանօթ պատճառէ մը այսպիսի արդիւնք կը հետեւի կանոնաւորաբար, թէ օրինակի համար մի կողմ եղած ծայրայեղութիւնը կը կանչէ, կը ծնուցանէ ծայրայեղութիւն մը դէպ ուրիշ կողմ. խորապէս հետազօտելով մարդուն բնութիւնը, հաստատելով օրինակի համար թէ բացարձակը իրեն համար անմատչելի բան է, սանձ մը կը դնեն երեւակայութեան խելակորոյս թռիչին, կը կտրեն քիմէրներուն թեւերը, կ'արգիլեն իւթորէրներու հեզինակները մոլորելէ երեւակայական միջոցներու մէջ: Հեռ'ի այն ատենէն օդի մէջ երազները, երկրային զբախտները՝ որոնք հազար յատկութիւններ եւ պզտիկ պակասութիւն մ'ունին, ամպերուն մէջ չինուած կորսուած դրախտներուն երազը, որոնք ունին նոյնպէս ամպերուն փաղփուռն գոյները եւ գեղածուփ հոսականութիւնը:

Շարունակելի

LE COMBAT

Organe international hebdomadaire

Directeur M. H. Belék ATHÈNES

Խնդրութեամբ կը շնորհաւորենք „lecombat“ի հրատարակումը և յաջողութիւն կը փախագինք անոր յարգելի անօրէն խմբագրապետին իր գծած փշոտ ուղիին մէջ, որ է կռուիլ սուտին դէմ, յարձակիլ անդուլ և անդադար անոր դէմ ինչ դիմակի տակ ալ որ ներկայանայ:

Կը խնդրուի թերթս ընդունողներէ որ հաճին իրենց բաժնեգները ուղարկելու:

Թերթիս ձեւը փոխելով, առաջին ու վերջին երկու
երեսները ծանուցումներու յատկացուցած ենք և կ'ըն-
դունինք ծանուցումներ իւրաքանչիւր պարզ գիրի հա-
մար 1, իսկ զարդագիրի համար 2 սանդիւմ ստանալով

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ

Ք Ն Ա Ր Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՊՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ
ՄԱՍՆ Ա

ԳԻՆ 2 ՖՐԱՆԿ

Կը բաղկանայ 216 էջերէ և կը պարունակէ մաքուր
տպագրութեամբ, հին և նոր ազգային երգեր:

Փափաքողները պէտք է դիմեն առ Մ. ԽԱԶԻԿԵԱՆ
Արեւելեան տպարան, Զրդ. Ուչաւթ թիւ 1104 ՎԱՌՆԱ:

Վառնայէն դուրս և օտար երկիրներէ պահանջուած
ներուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սան-
թիւմ իբր թղթատարական ծախք:

Отговоренъ Редакторъ: Д. Коларовъ.

Руссе, Типо-Хромо Литогр. на Д. М. Дробнякъ